Հեղինակ՝ Էլիզա Քեռշկարյան

ԱՐԱՆ ՈՒ ԱՆԻՆ
Մաս 3

Ինչպես Արան ու Անին սովորեցին սոցիալական նորմեր

Արի միասին հասկանանք, թե ինչ է սոցիալական նորմը, ինչու է անհրաժեշտ, որ դրանք իմանանք և կիրառենք:

Սոցիալական նորմն առաջացել է շատ վաղուց, այն կանոնակարգում է մարդկանց գործողությունները հասարակության մեջ, տարբեր հանրույթներում և խմբերում:

Սոցիալական նորմն առկա է մարդու ինքնադրսևորման բոլոր մակարդակներում՝ պահանջմունքներում, դրդապատճառներում, արժեքներում, վարքում, ապրելակերպում:

Սոցիալական նորմերին երբեմն հետևում ենք չգիտակցված, որովհետև դրանք բազմակի կրկնության արդյունքում ձևավորվել են որպես սովորույթներ և դարձել կանոններ:

Նպատակ

Տարբեր իրավիճակների միջոցով երեխաներին ծանոթացնել ընդունելի և անընդունելի սոցիալական նորմերին, դրանց պատճառահետևանքային կապերին:

Ընթացք

Ողջույն, մենք կրկին հանդիպեցինք, ինչպես խոստացել էինք: Այս անգամ մենք խոսելու ենք մի շատ կարևոր թեմայի մասին: Մենք քննարկելու ենք, թե ինչպես պետք է վարվել միմյանց հետ, ինչն է կարելի, ինչը՝ ոչ, կամ թե ինչպես ենք մեզ դրսևորում տարբեր իրավիճակներում և վայրերում:

Վստահ եմ, որ առօրյայում դու էլ բախվում ես այնպիսի իրավիճակների, որոնց ժամանակ չգիտես, թե ինչպես վարվել:

Լինում են դեպքեր, երբ ես ու Արան վիճում ենք, որովհետև իրար չենք զիջում, որի հետևանքով կամ ես եմ նեղանում, կամ ինքը: Այդժամ օգնության է հասնում մայրիկը և հարթում ամեն խնդիր: Բանն այն է, որ երբեմն մենք չգիտենք, թե որն է ճիշտ վարվելակերպը:

Ստորև ցուցադրված են տարբեր նկարներ: Անհրաժեշտ է, որ նախ նկարագրես նկարում առկա սյուժեն, այնուհետև, ուշադիր նայելով՝ ասես՝ արդյո՞ք պատկերվածը ընդունելի վարվելակերպ է, թե՞ ոչ, ի՞նչ խնդիրներ կարող է առաջացնել, և ինչպե՞ս վարվել ստեղծված իրավիճակում:

Նայիր նկարներին և արտահայտիր վերաբերմունքդ համապատասխան նշանով: Կարելի՞ է այդպես վարվել, թե՞ ոչ:

- ընդունելի վարքագիծ է

- անընդունելի վարքագիծ է

Եվ այսպես, սկսեցի՛նք:

















MILK







Oxymax Playroom

Paprika
Eggplant
Tomato



Նկարներում բերված սյուժեները շատ պատկերավոր են և ամբողջությամբ ներկայացնում են, թե ինչ իրավիճակ է:

Կարող ես շարունակել աշխատել նույն սկզբունքով՝ պատմելով, թե նկարում ինչ իրավիճակ է ներկայացված, և ասել՝ արդյոք տվյալ վարքագիծը թույլատրելի՞ է, թե՞ ոչ:

Անհրաժեշտ է այս նշանները տպել, կտրել և տեղադրել նկարում բերված շրջանակի մեջ:



- ընդունելի վարքագիծ է

- անընդունելի վարքագիծ է

CAT
FOOD

ok

ok

ok

ok